



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 454 - Ա

13 նոյեմբերի 2019 թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ  
ԳԵՈՐԳԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ  
ՍՈՒՍԱՆՆԱ ԼԵՎԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ  
ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՆՈՒՇ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի, 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Սուսաննա Լևիկի Ավետիսյանի դիմումը

կարգադրում եմ՝


1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սուսաննա Լևիկի Ավետիսյանին 2019 թվականի նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 6-ը ներառյալ տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 15 աշխատանքային օր:

2. 2019 թվականի նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 6-ը ներառյալ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7

միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության  
ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Անուշ Սայադյանին  
/առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի  
վճարման, համաձայնությամբ/:

3. Սուսաննա Լևիկի Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2019  
թվականի դեկտեմբերի 9-ից:

13.11.2019



ՄԱՐԶՊԵՏ ԿԵՆՏՐԱԼԻ ՔԱՆՈՒՄԱՆ GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ  
ք. Գավառ